Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 31-ի N 416 - Լ որոշման

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

1. Օժանդակության նպատակն է տնտեսավարողների համար ստեղծել ֆինանսական միջոցների ժամանակավոր հասանելիության հնարավորություն՝ պահանջարկի փոփոխվող պայմաններին արձագանքելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ըստ այդմ գործունեությունը շարունակելու կամ վերադասավորվելու ու փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ռազմավարությունը ճշգրտելու գործողություններ իրականացնելու համար:

2. Սույն Հավելվածում «տնտեսավարող» եզրույթն օգտագործվում է Միջոցառման մեջ կիրառված իմաստով: Ընդ որում նշված տնտեսվարողը պետք է միաժամանակ ունենա դրական ներդրումային վարկանիշ՝ վարկի համար դիմելու պահին նախորդող 12 ամիսների ընթացքում չպետք է ունենա գումարային 30 օր և ավելի ժամկետով ժամկետանց վարկային պարտավորություններ և 2019 թվականի հունվարի 1-ից մինչև օժանդակություն ստանալու համար դիմումը ներկայացնելու պահը ներառված՝ ամբողջական հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմնի կողմից վերահսկվող՝ պետական բյուջե վճարման ենթակա հարկերի, պարտադիր վճարների և դրոշմանիշային վճարի գծով ունեցած ժամկետանց պարտավորությունների չափը չի կարող գերազանցել 50 հազար դրամը:

3. Օժանդակությունը տրամադրվում է տնտեսավարողներին՝ ՀՀ տարածքում գործող բանկերից կամ վարկային կազմակերպություններից (այսուհետև՝ ֆինանսական կազմակերպություն) ստացվող նպատակային վարկերի համաֆինանսավորման, վերաֆինանսավորման և տոկոսադրույքի

սուբսիդավորման ձևով: Ընդ որում Միջոցառմանը մասնակցելու ցանկություն հայտնած վարկային կազմակերպություններն առնվազն պետք է ունենան 1 մլրդ ՀՀ դրամի չափով ընդհանուր կապիտալ և նրանց վրա տարածվի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347 Ն որոշմամբ հաստատված՝ «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ով սահմանված բոլոր տնտեսական նորմատիվները: Օժանդակության նախատեսվող ձևերով նպատակ է հետապնդվում լուծել.

1. **Համաֆինանսավորում.** վարկի գծով տնտեսավարողի մոտ ապահովման միջոցի ոչ բավարար մակարդակի, արժութային ռիսկի մասնակի չեզոքացման, ինչպես նաև տոկոսների գծով ծախսերի մասնակի նվազեցման խնդիրները:
2. **Վերաֆինանսավորում.** վարկի գծով տնտեսավարողի մոտ արժութային ռիսկի ամբողջական չեզոքացման, ինչպես նաև տոկոսների գծով ծախսերի մասնակի նվազեցման խնդիրները:
3. **Սուբսիդավորում**. վարկի գծով տնտեսավարողի մոտ տոկոսային ծախսերի էական նվազեցման խնդիրը:

3.1 Յուրաքանչյուր տնտեսավարողի համար կիրառելի է օժանդակության ձևերից միայն մեկը :

4. Օժանդակության ձևերը կիրառելի են այն վարկերի համար, որոնք տրամադրվում են տնտեսավարողներին հետևյալ ծախսերի իրականացման նպատակով.

- տնտեսավարողի աշխատողներին աշխատավարձ կամ դրան հավասարեցված վճարումներ (այսուհետ՝ աշխատավարձ), բայց յուրաքանչյուր աշխատողին ոչ ավել, քան ամսական 500 000 ՀՀ դրամ գումարի չափով՝ առավելագույնը երեք ամսվա համար (այսուհետ՝ աշխատակիցների վարկեր), ընդ որում սույն Հավելվածի իմաստով

աշխատակիցներ են համարվում այն անձիք, որոնց մասով օրենսդրությամբ սահմանված կարգով մինչև 2020թ. փետրվարի 29-ը ներառյալ ներկայացվել են գրանցման հայտեր: Միաժամանակ Միջոցառման շրջանակում ֆինանսավորվող աշխատավարձերը ենթակա չեն բարձրացման այդ աջակցության ամբողջ ընթացքում: Տնտեսավարողի աշխատողներին աշխատավարձի մասով ցուցաբերվող օժանդակության գումարը յուրաքանչյուր ամսվա հաշվով չի կարող գերազանցել 2020 թվականի փետրվար ամսվա համար հարկային մարմին ներկայացված՝ եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկով արտացոլված՝ աշխատավարձի ընդհանուր գումարը:

- պետական կամ համայնքի բյուջե հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վճարումներ (այսուհետ՝ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վարկեր)՝ առավելագույնը երեք ամսվա համար,
- հումքի գնում կամ ներմուծում, պայմանով, որ հումքի ողջ ծավալը պետք է օգտագործվի Հայաստանի Հանրապետությունում՝ պատրաստի արտադրանք ստանալու նպատակով և տնտեսավարողը տնօրինում է անհրաժեշտ և համապատասխան արտադրական հզորություններ (այսուհետ՝ հումքի վարկեր),
- նոր սարքերի և մեքենա-սարքավորումների գնում կամ ներմուծում, պայմանով, որ տվյալ սարքերը և մեքենա-սարքավորումները պետք է օգտագործվեն Հայաստանի Հանրապետությունում արտադրություն կազմակերպելու կամ արտադրությունն ընդլայնելու նպատակով (այսուհետ՝ սարքավորումների վարկեր),
- Հանրային ծառայությունների վճարումներ (էլեկտրաէներգիայի, ջրի, գազի, կապի և հեռահաղորդակցության գծով ծախսերի իրականացում, բայց յուրաքանչյուր ծառայության դեպքում ոչ ավել, քան ամսական 5 000 000 ՀՀ դրամ գումարի չափով՝ առավելագույնը երեք ամսվա համար (այսուհետ՝ կոմունալ վճարների վարկեր),
- ձեռնարկատիրությամբ զբաղվող ընկերությունների կողմից սննդի և դեղերի ներմուծում, պայմանով, որ գնված կամ ներմուծված ապրանքը պետք է

իրացվի Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ սննդի և դեղերի վարկեր),

5. Օժանդակության գործիքների կիրառմամբ տրամադրվող վարկերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

- արժույթը՝ ՀՀ դրամ, համաֆինանսավորման գործիքի դեպքում ֆինանսական կազմակերպության կողմից տրամադրվելիք մասը կարող է լինել նաև արտարժույթով՝ ՀՀ օրենսդրությամբ թույլատրված լինելու դեպքում, եթե Տնտեսվարողներն ունեն նման պահանջ, որի պարագայում Տնտեսվարողները ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից պետք է ներկայացնեն հավաստող տեղեկանք առ այն, որ իրենք ունեն անհրաժեշտ ծավալով արտարժութային հոսքեր վարկը մարելու համար,
- ժամկետը՝ մինչև 24 ամիս,
- մեկ տնտեսավարողի՝ օժանդակության գործիքի ներքո տրամադրվելիք վարկերի առավելագույն գումարը՝ 500 մլն. ՀՀ դրամ, ներառյալ Միջոցառման շրջանակներում բոլոր ֆինանսական կազմակերպությունների կողմից կողմից տրամադրված վարկերը, և մեկ տնտեսավարողի համաֆինանսավորման կամ վերաֆինանսավորման առավելագույն գումարի չափերը չեն կարող գերազանցել՝ 250 մլն. ՀՀ դրամը,
- վարկային միջոցների օգտագործման կարգը՝ միայն անկանխիկ՝ բանկային փոխանցումներով,
- առավելագույն փաստացի տոկոսադրույքը (միջին կշռված կերպով հաշվարկված) 0%-ից մինչև 6% տարեկան (6% - ից ոչ ավել)՝ կախված կիրառվող օժանդակության գործիքից:

6. Սույն հավելվածի շրջանակում ֆինանսական գործակալության պայմանագիրը կնքվում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամկետով՝ հաշվի առնելով, որ Միջոցառման ներքո նախատեսվող վարկերի ժամկետը լինելու է մինչև 2 տարի (24 ամիս), իսկ այդ վարկերի մարումների հաշվին հնարավոր են նաև նոր վարկերի վերաֆինանսավորումներ ևս 2 տարի ժամկետով:

7. ՀՀ կենտրոնական բանկը Միջոցառմանը մասնակցելու ցանկություն հայտնած և սույն որոշմամբ սահմանված ֆինանսական կազմակերպությունների հետ կնքում է ֆինանսական գործակալության պայմանագրի պահանջներին բավարարող գլխավոր վարկային պայմանագրեր (այսուհետ՝ ԳՎՊ):
8. Միջոցառման չափանիշներին բավարարող շահառուները դիմում են ՀՀ կենտրոնական բանկի հետ ԳՎՊ կնքած ֆինանսական կազմակերպություններին վարկավորման նպատակով՝ ներկայացնելով Միջոցառման ներքո օժանդակության կոնկրետ ուղղություններով գումարների օգտագործման մասին տեղեկատվություն, մասնավորապես, օրինակ, հումքի, նյութերի, սարքավորումների, սննդի և դեղերի վարկերի դեպքում պարտադիր շահառուի կողմից ներկայացման են ենթակա համապատասխան կնքված պայմանագրերը և դրանց գծով հաշիվ ապրանքագրերը, աշխատավարձի և կոմունալ վճարների գծով պարտավորությունների մասով տեղեկությունները:
9. Ֆինանսական կազմակերպություններն իրականացնում են վարկառուների վարկունակության գնահատումը և նախնական որոշում կայացնում Միջոցառման ներքո վարկ տրամադրելու վերաբերյալ (վարկի նախահաստատում):
10. Ֆինանսական կազմակերպությունները վարկի նախահաստատումից հետո ԳՎՊ-ով սահմանված ընթացակարգով համապատասխան հայտ են ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հիմնարկ հանդիսացող «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակը (այսուհետ՝ Հիմնարկ):
11. Հիմնարկը Միջոցառման մեկնարկից հետո 3 աշխատանքային օրերի ընթացքում հավաքագրում է Ֆինանսական կազմակերպություններից 10-րդ կետով սահմանված հայտերը, ստուգում դրանց համապատասխանությունը Միջոցառման ընդհանուր պայմաններին: Նշված աշխատանքային օրերի ավարտից հետո Հիմնարկի կողմից հայտերի ընդունումը և դրանց համապատասխանության ստուգումն իրականացվում է ամենօրյա կտրվածքով՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

12. Հիմնարկի կողմից Միջոցառման ընդհանուր պայմաններին համապատասխանող հայտերը հաստատվում են ըստ հայտով ներկայացված հատկացման գումարի մեծության՝ փոքրից մեծ սկզբունքով: Յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար հաստատվող հայտերով նշված հատկացման գումարների ընդհանուր մեծությունը չի կարող գերազանցել 3 մլրդ ՀՀ դրամը, ընդ որում յուրաքանչյուր օժանդակության գործիքի համար՝ ոչ ավել քան 1 մլրդ ՀՀ դրամ: Յուրաքանչյուր աշխատանքային օրվա ընթացքում Միջոցառման ընդհանուր պայմաններին համապատասխանող, սակայն յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սույն կետով սահմանված չափերի գերազանցման արդյունքում չբավարարված հայտերը, փոխանցվում են հաջորդ աշխատանքային օր և դիտարկվում են հաջորդ աշխատանքային օրը ներկայացված հայտերի հետ՝ փոքրից մեծ սկզբունքով:
13. Ֆինանսական կազմակերպությունը Հիմնարկի կողմից հայտի հաստատման դեպքում տրամադրում է վարկ: Վարկը տրամադրվում է բացառապես անկանխիկ եղանակով: Ընդ ռում շահառուները տրամադրված վարկերը կարող են օգտագործել բացառապես սույն Միջոցառման նպատակների համար:
14. Ֆինանսական կազմակերպությունը վարկը տրամադրելուց հետո ԳՎՊ-ով սահմանված ընթացակարգով համապատասխան դիմում է ներկայացնում Հիմնարկ՝ այդ վարկի վերաֆինանսավորման կամ համաֆինանսավորման նպատակով:
15. Միջոցառման պահանջներին բավարարող վարկերի համաֆինանսավորման և վերաֆինանսավորման նպատակով վարկերը Հիմնարկի կողմից ֆինանսական կազմակերպություններին նույնպես տրամադրվում են անկանխիկ եղանակով:
16. Միջոցառման ներքո ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված համաֆինանսավորման վարկերի գծով մարումներն իրականացվում են համամասնորեն: Տնտեսավարողի կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պաշաճ կատարելու դեպքում, երբ վարկային հարաբերությունների հետ կապված միջոցները (վարկի և դրա

ապահովման) որ բավարար են՝ բավարարումն իրականացվում է ընդհանուր կարգով հետևյալ սկզբունքով՝ նախ բավարարվում են ֆինանսական կազմակերպությունների պահանջները, այնուհետև՝ ՀՀ կառավարության պահանջները:

17. Ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի համաֆինանսավորման, վերաֆինանսավորման նպատակով հայտերի ներկայացման, դրանց բավարարման կարգն ու ժամկետները, ինչպես նաև միջոցների նպատակային օգտագործման, պետության նկատմամբ ստանձնած պարտավորությունների կատարման ընթացակարգերը կարգավորվում են ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև կնքված համապատասխան ֆինանսական գործակալության պայմանագրով:
18. Օժանդակության սուբսիդավորման գործիքի կիրառման դեպքում վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից փոխանցվում է ֆինանսական կազմակերպության համապատասխան հաշվին՝ ֆինանսական կազմակերպության հայտի հիման վրա: Տոկոսադրույքների սուբսիդավորման գործընթացը կարգավորվում է ֆինանսական կազմակերպությունների և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև կնքվող պայմանագրերով:
19. Միջոցառման շրջանակում տրամադրված օժանդակության գործիքների կիրառման մոնիտորինգն իրականացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարությունը՝ եռամսյա կտրվածքով, իսկ Հիմնարկը 15 օրը մեկ անգամ սույն կարգի 17-րդ կետով նշված պայմանագրով սահմանված համապատասխան ձևաչափով հաշվետվություն է տրամադրում ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 31-ի N 416 - Լ որոշման

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՋՈՔԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳ

1. Օժանդակության նպատակն է տնտեսավարողների համար ստեղծել ֆինանսական միջոցների ժամանակավոր հասանելիության հնարավորություն՝ պահանջարկի փոփոխվող պայմաններին արձագանքելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ըստ այդմ գործունեությունը շարունակելու կամ վերադասավորվելու ու փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ռազմավարությունները ճշտգրտելու գործողություններ իրականացնելու համար:

2. Սույն հավելվածի իմաստով տնտեսավարող է համարվում ՀՀ տարածքում գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը միաժամանակ բավարարում է «ա»-ից «գ» կետերի պահանջներին՝

ա) վարկի համար դիմելու պահին նախորդող 12 ամիսների ընթացքում չպետք է ունենա գումարային 30 օր և ավելի ժամկետով ժամկետանց վարկային պարտավորություններ,

բ) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ օժանդակություն ստանալու համար դիմելու պահին հողի հարկի և գույքահարկի գծով ժամկետանց հարկային պարտավորությունների հանրագումարը չի կարող գերազանցել 50 հազար դրամը,

գ) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերի դեպքում՝ վարկի 2019 թվականի հունվարի 1-ից մինչև օժանդակություն ստանալու համար դիմումը ներկայացնելու պահը ներառված՝ ամբողջական հաշվետու ժամանակաշրջանների

համար հարկային մարմնի կողմից վերահսկվող՝ պետական բյուջե վճարման ենթակա հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով ունեցած ժամկետանց պարտավորությունների չափը չի կարող գերազանցել 50 հազար դրամը:

3. Օժանդակությունը տրամադրվում է տնտեսավարողներին՝ ՀՀ տարածքում գործող բանկերից կամ վարկային կազմակերպություններից (այսուհետև՝ Ֆինանսական կազմակերպություն) ստացվող նպատակային վարկերի համաֆինանսավորման ձևով:

Ընդ որում, Միջոցառմանը մասնակցել կարող են այն վարկային կազմակերպությունները, որոնք ունեն առնվազն 1 մլրդ ՀՀ դրամի չափով ընդհանուր կապիտալ: Նշված վարկային կազմակերպությունների նկատմամբ պետք է տարածվեն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347 Ն որոշմամբ հաստատված՝ «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ով սահմանված բոլոր տնտեսական նորմատիվները:

4. Համաֆինանսավորումը վարկի գծով տնտեսավարողի մոտ ապահովման միջոցի ոչ բավարար մակարդակի և արժութային ռիսկի մասնակի չեզոքացման նպատակով ՀՀ կառավարության կողմից Ֆինանսական կազմակերպությանը տրամադրվող անտոկոս փոխառություն է:

Ընդ որում, համաֆինանսավորում տրվում է այն դեպքում, եթե յուրաքանչյուր գործարքի ֆինանսավորման դեպքում Ֆինանսական կազմակերպությունների միջոցներով ֆինանսավորվող մասի փաստացի տոկոսադրույքը չի գերազանցում ՀՀ դրամով 14%-ը, իսկ արտարժույթով՝ 9%-ը:

5. Համաֆինանսավորվել կարող են այն Ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացվող վարկերը, որոնք ՀՀ էկոնոմիկայի նախարարության Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ Գյուղական ֆինանսավորման կառույցի (այսուհետ՝ Կառույց) հետ կնքել են Միջոցառմանը մասնակցության վերաբերյալ պայմանագրեր (այսուհետ՝ Պայմանագիր):

6. Միջոցառման չափանիշներին բավարարող շահառուները վարկավորման/լիզինգի նպատակով դիմում են Կառույցի հետ Պայմանագրեր կնքած Ֆինանսական կազմակերպություններին՝ ներկայացնելով Միջոցառման ներքո օժանդակության կոնկրետ ուղղություններով գումարների օգտագործման մասին տեղեկատվություն՝ համաձայն գյուղատնտեսության ոլորտի աջակցման գործող պետական ծրագրերի պահանջների:

7. Ֆինանսական կազմակերպություններն իրականացնում են վարկառուների վարկունակության գնահատումը և կայացնում են նախնական որոշում՝ Միջոցառման ներքո վարկ/լիզինգ տրամադրելու վերաբերյալ (վարկի նախահաստատում):

8. Սույն աջակցության նպատակով վարկի նախահաստատում չի կարող իրականացվել այն դեպքում, եթե Գյուղատնտեսական կոոպերատիվի փոխկապակցված անդամների փայերի հանրագումարը գերազանցում է փայատիրական կապիտալի 40%-ը: Սույն կարգի իմաստով անձինք համարվում են փոխկապակցված՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

9. Ֆինանսական կազմակերպությունները վարկի նախահաստատումից հետո, Պայմանագրով սահմանված ընթացակարգով՝ Կառույցին են ներկայացնում համապատասխան հայտ:

10. Կառույցը ստուգում է ներկայացված հայտի համապատասխանությունը Միջոցառման ներքո սահմանված պահանջներին: Եթե համաֆինանսավորման ընդհանուր գումարը չի գերազանցում 15 մլն դրամը, ապա Կառույցը Ֆինանսական կազմակերպություններին տրամադրում է համապատասխան եզրակացություն:

11. Միջոցառման ներքո վարկը Ֆինանսական կազմակերպության կողմից տրամադրվում է Կառույցի դրական եզրակացության առկայության դեպքում: Վարկը տրամադրվում է բացառապես անկանխիկ եղանակով:

12. Գյուղատնտեսական կոոպերատիվների համար համաֆինանսավորման նախապայման է համարվում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված կարգով Գյուղատնտեսական կոոպերատիվի նախագահին տրված համապատասխան հավաստագրի առկայությունը:

13. Վարկը տրամադրելուց հետո՝ Ֆինանսական կազմակերպությունը Պայմանագրով սահմանված ընթացակարգով Կառույցին է ներկայացնում վարկի համաֆինանսավորման հայտ:

14.Կառույցը բավարարված հայտերի գծով դիմում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը՝ հայտերով պահանջվող գումարները ստանալու և Ֆինանսական կազմակերպությունների համապատասխան հաշիվներին փոխանցելու նպատակով: Ընդ որում, բավարարված հայտերի և դրանցով հատկացված ընդհանուր ֆինանսավորման մեծության 3 մլրդ ՀՀ դրամը լրանալուց հետո ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը համապատասխան գրությամբ տեղեկացնում է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

15. Ֆինանսական կազմակերպության կողմից 15 մլն ՀՀ դրամը չգերազանցող համաֆինանսավորման նպատակով հայտը Կառույցին կարող է ներկայացվել այն դեպքում, եթե շահառուների սեփական ֆինանսական մասնակցությունը պակաս չէ համաֆինանսավորման գումարի 30 տոկոսից:

16. 15 մլն ՀՀ դրամը գերազանցող չափով պետության համաֆինանսավորման վերաբերյալ դրական եզրակացություն տրվում է այդ մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունմամբ:

17. Ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի համաֆինանսավորման նպատակով հայտերի ներկայացման, դրանց բավարարման կարգն ու ժամկետները, ինչպես նաև միջոցների նպատակային օգտագործման, պետության նկատմամբ ստանձնած պարտավորությունների կատարման ընթացակարգերը կարգավորվում են Կառույցի և Ֆինանսական կազմակերպությունների միջև կնքվող պայմանագրերով:

18. Միջոցառման ներքո տրամադրված վարկերի մոնիտորինգն իրականացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 31-ի N 416 - Լ որոշման

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառման շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգ

1. Օժանդակության նպատակն է տնտեսավարողների համար ստեղծել ֆինանսական միջոցների ժամանակավոր հասանելիության հնարավորություն՝ պահանջարկի փոփոխվող պայմաններին արձագանքելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու, ըստ այդմ՝ գործունեությունը շարունակելու կամ վերադասավորվելու ու փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ռազմավարությունը ճշգրտելու գործողություններ իրականացնելու համար:

2. Սույն կարգի իմաստով տնտեսավարող է համարվում ՀՀ տարածքում ստեղծված իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը:

3. Օժանդակությունը տրամադրվում է տնտեսավարողներին՝ ՀՀ տարածքում գործող բանկերից կամ վարկային կազմակերպություններից (այսուհետև՝ ֆինանսական կազմակերպություն) ստացվող նպատակային արտոնյալ վարկերի տեսքով:

4. Սույն կարգի իմաստով արտոնյալ վարկ է համարվում բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով Միջոցառման շրջանակում Շահառուներին տրամադրվող վարկը:

5. Սույն կարգի շրջանակում ֆինանսական գործակալության պայմանագիրը կնքվում է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամկետով՝ հաշվի առնելով, որ Միջոցառման ներքո նախատեսվող վարկերի ժամկետը լինելու է 36 ամիս:

6. ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը և Ներդրումների աջակցման կենտրոնը (այսուհետ՝ ՆԱԿ)՝ Միջոցառմանը մասնակցելու ցանկություն հայտնած

Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքում են ֆինանսական գործակալության պահանջներին բավարարող գլխավոր պայմանագիր:

Ընդ որում, Միջոցառմանը մասնակցելու ցանկություն հայտնած վարկային կազմակերպություններն առնվազն պետք է ունենան 1 մլրդ ՀՀ դրամի չափով ընդհանուր կապիտալ: Նշված վարկային կազմակերպությունների նկատմամբ պետք է տարածվեն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347 Ն որոշմամբ հաստատված՝ «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ով սահմանված բոլոր տնտեսական նորմատիվները:

7. Ֆինանսական գործակալության պայմանագիր կարող է ստորագրվել այն Ֆինանսական կազմակերպությունների հետ, որոնց կողմից Միջոցառման շրջանակում վարկի տարեկան սպասարկման վճարը չի գերազանցի վարկի մայր գումարի 0.3%-ը: Վարկի սպասարկման վճարը Ֆինանսական կազմակերպությանը վճարում է Ներդրումների աջակցման կենտրոնը:

8. Միջոցառման չափանիշներին բավարարող Շահառուները վարկավորման նպատակով դիմում են ՆԱԿ՝ ներկայացնելով նրանց ընտրության համար ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված տեղեկատվությունը:

9. ՆԱԿ-ը Շահառուների ընտրության նպատակով ստացված տեղեկատվության նախնական համապատասխանության ստուգումն իրականացնում է երկու աշխատանքային օրվա ընթացքում: Թերությունների կամ մերժման հիմքերի առկայության դեպքում դրանց վերաբերյալ Շահառուին տեղեկացումը կատարվում է էլեկտրոնային եղանակով՝ նույն ժամկետում:

10. Վարկային հայտի ստացման ժամկետ է համարվում ամբողջական տեղեկատվության ստացման ամսաթիվը:

11. Վարկային հայտի ստացումից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ՆԱԿ-ը դիմում է ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ ՊԵԿ)՝ Շահառուի ընտրության համար սահմանված բարվոք հարկային պատմության պահանջների համապատասխանությունը հաստատելու նպատակով: ՀՀ ՊԵԿ-ը սահմանված

պահանջների համապատասխանության հաստատումը կամ հերքումը ՆԱԿ-ին է տրամադրում հարցումը ստանալուց երկու աշխատանքային օրվա ընթացքում:

12. ՊԵԿ-ի կողմից Շահառուի բարվոք հարկային պատմության հերքում ստանալու դեպքում ՆԱԿ-ը որոշում է ընդունում հայտի մերժման վերաբերյալ և այդ մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային կարգով ծանուցում է Շահառուին:

13. Շահառուի բարվոք հարկային պատմության վերաբերյալ ՊԵԿ-ի դրական հաստատումը ստանալու դեպքում ՆԱԿ-ը մեկ աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է արտոնյալ վարկավորումը հաստատելու վերաբերյալ որոշում և այդ մասին էլեկտրոնային կարգով ծանուցում Շահառուին՝ տրամադրելով նաև այն Ֆինանսական կազմակերպությունների վերաբերյալ տվյալները, որոնց միջոցով կարող է հաստատվել արտոնյալ վարկի ստացումը:

14. Շահառուն ՆԱԿ-ի արտոնյալ վարկավորման որոշման վերաբերյալ ծանուցումը ստանալուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում ՆԱԿ է ներկայացնում այն Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տեղեկությունը, որի միջոցով ցանկանում է իրականացնել իր վարկի սպասարկումը:

15. Ֆինանսական կազմակերպության ընտրության վերաբերյալ Շահառուի հաստատումը ստանալուց և նրան առնչվող երաշխավորության պայմանագրերը ստորագրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացում ՆԱԿ-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարություն և համապատասխան Ֆինանսական կազմակերպություն է ներկայացնում այդ տվյալները:

16. Ֆինանսական կազմակերպությունը տեղեկացումը ստանալուց հետո գործակալության պայմանագրով սահմանված ժամկետում Շահառուի հետ կնքում է վարկավորման պայմանագիր կամ ՆԱԿ-ին և Շահառուին տեղեկացնում է դրանից հրաժարվելու պատճառների վերաբերյալ:

17. ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից արտոնյալ վարկավորման միջոցները Ֆինանսական կազմակերպությանն են փոխանցվում վարկային պայմանագրի կնքման վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում:

18. Արտոնյալ Վարկը Շահառուին տրամադրում է բացառապես անկանխիկ եղանակով՝ Միջոցառումամբ սահմանված ծախսային ուղղություններով:

19. Արտոնյալ վարկերի տրամադրման կարգն ու ժամկետները, ինչպես նաև միջոցների նպատակային օգտագործման, կողմերի ստանձնած պարտավորությունների կատարման ընթացակարգերը կարգավորվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Ներդրումների աջակցման կենտրոնի և ֆինանսական կազմակերպության միջև եռակողմ պայմանագրով՝ հաշվի առնելով Վարկերի մարման կարգի վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության սահմանած նվազագույն պահանջները:

20. Միջոցառման շրջանակում տրամադրված օժանդակության գործիքների կիրառման մշտադիտարկումն իրականացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարությունը՝ եռամսյա պարբերականությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ